

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

24 փետրվարի 2015 թ.

N 91-Ա

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ  
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ  
2015 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1-Ն որոշման 17-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնության հուշարձանների անձնագրերի կազմման միջոցառումների 2015 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## Ծ Ր Ա Գ Ի Ր

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԱՆՃՆԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն աչքի է ընկնում բնության հուշարձաններին վայել բնական օբյեկտների և համալիրների արտասովոր բազմազանությամբ, որոնք բնապահպանական, ռեկրեացիոն և սոցիալ-տնտեսական բացառիկ արժեք են ներկայացնում: Այդ իսկ պատճառով բնության հուշարձանների պահպանությունը կարևոր հիմնախնդիր է, որի լուծման համար անհրաժեշտ է ձեռնամուխ լինել դրանց տարածքների հստակեցման, չափագրման, սահմանների ճշգրտման, անձնագրավորման և արդյունավետ բնօգտագործման ծրագրերի իրականացման միջոցառումներին: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնության հուշարձանների անձնագրերի կազմման միջոցառումների 2015 թվականի ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացումը հնարավորություն կընձեռնի գնահատել, վերահսկել բնության հուշարձանների վրա մարդածին ճնշումները, մշակել հուշարձանների բնապահպանական, գեղագիտական, ռեկրեացիոն և պատմամշակութային արժեքների օգտագործման հիմունքները: Այն հնարավորություն կտա ամփոփել բնության հուշարձանների վերաբերյալ գոյություն ունեցող տեղեկատվությունը, մշակել և իրականացնել համապատասխան քաղաքականություն, բնապահպանական, բնօգտագործման տարբեր ծրագրեր և միջոցառումներ: Բնության հուշարձանների պահպանման գոտիների հստակեցման և չափագրման, պահպանության ռեժիմների սահմանման հետագա աշխատանքների արդյունքում կամբողջականացվեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնության հատուկ պահպանող տարածքները:

2. Բնության հուշարձանների անձնագրերի կազմումը կիրականացվի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 30-ի «Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 1053-Ն որոշմամբ հաստատված ցանկի համաձայն: Ցանկում ընդգրկված բնության հուշարձանների ընդհանուր քանակից 2015 թվականին նախատեսվում է դաշտային հետազոտությունների իրականացմամբ կազմել բնության թվով յոթ հուշարձանների անձնագիր, որոնց վերաբերյալ հակիրճ տեղեկություններ արտահայտված են ստորև ներկայացված աղյուսակում.

Հ/Հ	Անվանումը	Տեղադիրքը
1	«Ծապին ձոր» ջրվեժ	Մարտակերտի շրջան, Առաջաձոր գյուղի մոտ, 20-25 մ բարձրությամբ
2	«Աղջկաբերդ» (Կուսաբերդ) ժայռաքանդակ	Մարտունու շրջան, Բերդաշեն գյուղից 2 կմ հյուսիս
3	«Անանուն» սյունաձև բազալտների անջատումներ	Շահումյանի շրջան, Թարթառ գետի հյուսիս-արևմտյան զառիթափ լանջին՝ Քարվաճառ շրջկենտրոնի մոտ
4	«Թթու ջուր» հանքային աղբյուր	Թբղլու գյուղի արևմտյան եզրին
5	«Խոլոզանց ջերմաղբյուր» հանքային աղբյուր	Շահումյանի շրջան, Քարվաճառ շրջկենտրոնից 12 կմ հարավ-արևմուտք, Թարթառ գետի ձախ ափին
6	«Պատարայի գետահովիտ» (Կուսանաց բնապատմական տարածք)	Ասկերանի շրջան, Պատարա գյուղից 7 կմ հարավ-արևմուտք
7	«Սղոցի» ծառերի ենթասնտառ	Ասկերանի շրջան, 20 հա սղոցու ենթասնտառ հաճարենու և բոխենու խառը անտառում

3. Բնության հուշարձանի անձնագիրն ընդգրկելու է՝

- 1) անվանումը և դասակարգումը.
- 2) տեղադիրքը և աշխարհագրական կոորդինատները.
- 3) նկարագրությունը, չափագրությունը և վիճակը.
- 4) սահմանների և պահպանման գոտու նկարագրությունը, մակերեսը, քարտեզ-հատակագիծը.
- 5) տվյալներ սեփականատիրոջ և հողօգտագործողի մասին.
- 6) պահպանության և օգտագործման ռեժիմի առանձնահատկությունները.
- 7) տվյալներ պահպանությունն իրականացնող սուբյեկտի մասին:

4. Բնության հուշարձանների անձնագրերի կազմման համար վերը թվարկված աշխատանքների կատարումը պահանջում է համապատասխան մասնագիտական մոտեցում՝ մասնագետների և մասնագիտացված կազմակերպությունների ներգրավմամբ:

## II. ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ծրագրի նպատակն է դաշտային չափագրման և հետազոտման տվյալների հիման վրա հստակեցնել և չափագրել վերոնշյալ աղյուսակում առկա հուշարձանների սահմանները, որոշել և քարտեզագրել բնության հուշարձանների պահպանման գոտիները, ճշգրտել բնության հուշարձանների տեղադիրքերը, ստեղծել բնության հուշարձանների տվյալների երկրատեղեկատվական բազա, կազմել բնության հուշարձանների անձնագրերի նախագծերը և դրանց հաստատման վերաբերյալ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետի հրամանի նախագիծը:

2. Ծրագրի հիմնական խնդիրն է հանդիսանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնության եզակի հուշարձանների պահպանության նախադրյալների ապահովումը:

### **III. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

1. Ծրագրով սահմանվում են 2015 թվականին իրականացվելիք հետևյալ միջոցառումները.

1) բնության հուշարձանների զբաղեցրած տարածքների սահմանների հստակեցում և չափագրում.

2) բնության հուշարձանների պահպանական գոտու սահմանում և քարտեզագրում.

3) բնության հուշարձանների անձնագրերի մշակում և կազմում.

4) բնության հուշարձանների տվյալների թվայնացում և երկրատեղեկատվական բազայի ստեղծում:

### **IV. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

1. Ծրագրի իրականացման շրջանակներում ակնկալվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ունենալ՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնության հուշարձանների հստակեցված պահպանման գոտիները և սահմանները, քարտեզ-հատակագծերը և հուշարձանների ու դրանց պահպանման գոտու սահմանների նկարագիրը.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնության հուշարձանների մշակված անձնագրերը.

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնության հուշարձանների երկրատեղեկատվական բազան:

### **V. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ**

Ծրագրի ֆինանսավորման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեից կհատկացվի 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**